

ԱՄԻՐԴՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՑՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Բժշկ. գիտ. գաղափար Ս. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Միջնադարյան հայ բժշկության հրախտավորներից մեկի՝ Ամիրդովլաթ՝ Ամասիացու երկերը գիտական ասպարեզ մտան, երբ մեր մատենագրության մեջ առկա էին անվանի հայ բժիշկների գործեր, սկսած «Գազիկ-Հեթումյան բժշկարանից» և Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարությունից» մինչև կիրիկյան դպրոցի այլ արժեքավոր բժշկարաններ, որոնց թվին են պատկանում Ստեփանոսի «Մաղիկը» և Գրիգորիսի «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց» երկասիրությունը։ Այս բժշկարանների մի մասը մեզ չի հասել, սակայն Ամասիացին նրանց քաջածանոթ է եղել, ինչպես ինքն է գրել այդ մասին «Անգիտաց անպէտի» (1478—1482) առաջարանում. «Եւ ի յայս բանիցս առին առաջին բժշկապետքն մեր՝ մեծն Մխիթար բժիշկն եւ Ահարոն բժիշկն, եւ որդին նորա՝ Ստեփանոս բժիշկն, եւ տոհմն նորա՝ Ճոշին բժիշկն, եւ Սարգիս բժիշկն, եւ Դեղին բժիշկն, եւ Սիմաւոն բժիշկն, եւ Վահրամ բժիշկն, որ շատ գրեանք շինեւ էին վասն դեղերուն զաւրութեանն եւ աւգտութեանն»¹։

Խորապես ուսումնասիրելով իր նախորդների աշխատությունները, Ամիրդովլաթը, քննադատաբար վերաբերվելով դրանց, նշել է, որ վերոհիշյալ հեղինակներն իրենց դեղագիտարանները «կարճառաւտ էին արել. եւ թէ զբնութիւնն կու գիտէաք, նա զէութիւնն չի գիտէաք, եւ թէ զաւրութիւնն կու գիտնայեաք, զբնութիւնն չէաք գիտնալ։ Եւ կար, որ զանուանքն գիտէաք, եւ զինքն զի գիտէաք։ Եւ կար, որ զանունն գիտէաք, եւ ոչ զինքն, եւ ոչ զիւր փոխանն. եւ ի վերայ այսոր՝ հանապազ մեզ ի պակասութիւն կար վասն դեղերուն. եւ այս պատճառաւ՝ այլ ազգաց կարաւտ էաք»²։

Ժամանակին Հերացին «Ջերմանց մխիթարութեան» մեջ նույնպես անդրադարձել էր իր նախորդների սխալներին և բացթողումներին։ «Եւ ի Հայք բնաւ ոչ գաի զվարդապետութիւն և զիմաստ նախագիտութեան,— գրել է նա,— այլ զստածումն միայն. և այս ոչ ըստ կարգի և լի, այլ համառօտ և ծաղկաքաղ աստի և անտի հաւաքեալ, յայլ և այլ գրչադ և մտաց այլայլած»³։ Գուցե հենց այդ էր պատճառը, որ Մխիթար Հերացին, իսկ հետագայում նաև Ամասիացին, իրենց գիտական աշխատություններում գերապատվութիւնը տվել են օտար աղբյուրներին՝ հույն և արաբ հեղինակների գործերին։ Պատահական չէ, որ Հերացին «Ջերմանց մխիթարութեան» մեջ չի հիշատակում ոչ մի հայկական աղբյուր, նույնիսկ հռչակավոր «Գազիկ-Հեթումյան բժշկարանը», որը ստեղծվել էր Անիում Գազիկ I-ի օրոք (990—1020) և առաջին անգամ խմբագրվել Կիրիկյան Հայաստանում Մեծն Մխիթարի կենդանության ժամանակ⁴։

Ամիրդովլաթի «Ուսումն բժշկութեան» (1459) և «Օգուտ բժշկութեան» (1466—1469) աշխատություններում նույնպես չեն հիշատակված հայկական

¹ Ամիրդովլաթ Ամասիացի. Անգիտաց անպէտ, խմբ. Կ. Բաժմալյանի. Վիեննա, 1936, էջ 2։

² Նույն տեղում։

³ Մխիթարայ բժշկապէտի Հերացոյ Ջերմանց մխիթարութիւն. Վենետիկ, 1832։

⁴ Ս. Վարդանյան. Գազիկ-Հեթումյան բժշկարանը և նրա խմբագրական տարբերակները.— «Պատմա-բանասիրական հանգես», 1985, № 2, էջ 146։

աղբյուրները, իսկ «Անգիտաց անպէտում» հույն, ասորի, հրեա, արաբ, պարսիկ բժիշկների կողքին նա վկայակոչում է նաև հայ հեղինակների անունները: Սակայն եթե օտար հեղինակների գործերին նա բազմիցս անդրադարձել է դրքի տարբեր բաժիններում, ապա հայ բժիշկներին մասին խոսում է միայն առաջարանում: Այդուհանդերձ մեզ անհավանական էր թվում, որ հայ բժշկապետն իր զլուխգործոցներում, ինչպես նաև վաղ շրջանի աշխատություններում, ամփոփելով հայ բժշկության պատմական փորձը, չօգտվեր հայկական աղբյուրներից: Ուստի բնագրագիտական պրպտումներ ենք կատարել՝ համեմատելով Մխիթար Հերացու և Ամիրդովլաթ Ամասիացու մարդակազմության, ախտաբանության, մահճարուժության և դեղագիտության հարցերին նվիրված գործերի որոշ հատվածներ:

Աչքի կազմախոսության Ամիրդովլաթն անդրադարձել է «Ուսումն բժշկութեան» աշխատությունում, որը հետագայում մտել է «Օգուտ բժշկութեան» գրքի մեջ: Այս գրքի «Կերպ վասն կազմութեան աչացն, թէ որպէս է» գլուխը համեմատել ենք Հերացու «Վասն շինուածոյ և յօրինուածոյ աչացն» պատառիկի հետ, որը պահպանվել է Արուսայիգի «Յաղագս կազմութեան մարդոյ» երկասիրության մեջ:

Բնագրագիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ այս երկու հատվածների հիմքում ընկած է աչքի թաղանթների և հեղուկների Գալենյան դասակարգումը: Ըստ որում Հերացին ուղղակի նշում է իր աղբյուրը. «Եւ պարտ է գիտենալ զայս,— դրում է նա,— զի առաջին իմաստասէրքն շատ հակառակ են ասացել միմեանց վասն աչաց աստառացն, զի ոմանք Զ և ոմանք Ե, ոմանք Դ, ոմանք Գ և ոմանք Բ աստառ ասացին: Բայց ես զԳալիանոսին ասեմ, զի Գալիանոս է աստառ ասաց զաչքն և Գ գիշութիւն և Թ մկունք»⁵: Գալենյան դասակարգումն առկա է նաև Ամիրդովլաթի մոտ: Այս երկու աշխատությունների համար բնորոշ է ոչ միայն դասակարգման ընդհանուր սկզբունքը, այլ նաև տերմինաբանությունը: Այստեղ պետք է նշենք մեկ կարևոր հանգամանք ևս. թեպետ հայ հեղինակներն ընդունել են Գալենյան դասակարգումը, սակայն աչքի թաղանթների ու հեղուկների անունների համար օգտագործել են մեծ մասամբ արաբերեն կամ արաբացված հունարեն տերմիններ: Պատճառն այն է, որ X դարից հետո միջնադարյան հայ բժշկության մեջ կիրառվում էր արաբական տերմինաբանությունը՝ ի տարբերություն ավելի վաղ շրջանի, երբ գերիշխողը հունա-հռոմեականն էր⁶:

Մխիթար Հերացին աչքի թաղանթները նկարագրությունը սկսում է պընդենուց (լատ. selera), որը նա անվանում է արաբերեն՝ սուլպիէ, ապա հետևելով թաղանթների ու հեղուկների ոլորտային դասավորությանը աչքում, թվարկում է անոթներն (լատ. choricidea, ար. մշիմա), ցանցներն (լատ. retina, ար. շապաքիա և յանկապութիա), ապիկներն (լատ. corpus vitreum, ար. դոճաճի). ոսպ յակը (լատ. lens crystallina, ար. ճալիտի), ջրային հեղահյութը (լատ. humor aqueus, ըստ որում արաբերեն «պալիգէ» տերմինի փոխարեն օգտագործված է նրա հայերեն պատճենը՝ ճոսր սպիտակուց ձվի), ծիածանը (լատ. iris, ար. լանապիա), կղջրներն (լատ. cornea, ար. խառնիէ) և վերջապես շաղկապներն (լատ. conjunctiva, ար. մուլթահիմա):

Ամասիացին նկարագրել է աչքի թաղանթները հակառակ ուղղությամբ՝ սկսելով շաղկապենուց և ավարտելով պնդենիով. մուլթահիմա, դարնիէ, յանապի, անքապութի, շապաքայ, սուլպիէ, մաշիմայ, իսկ հեղուկները թվարկում է նույնպես հակառակ դասավորությամբ՝ պալիգէ, ճալիտէ, դոճաճի: Արաբերեն այս բոլոր բառերն իրենցից ներկայացնում են Գալենյան տեր-

⁵ Արուսայիգ. Յաղագս կազմութեան մարդոյ, աշխ. Ս. Վարդանյանի. Երևան, 1974, էջ 178:

⁶ Л. Оганесян. История медицины в Армении. Т. I, Ереван, 1946, с. 212.

մինների պատճեն, որոնց նմանությամբ ստեղծվել են միջնադարյան հայերեն տերմինները:

Հետևելով Գալենի հայացքներին, հայ բժշկապետները տեսողության կարևորագույն օրգան են համարել ոչ թե ցանցենին, ինչպես այդ ապացուցված է ժամանակակից բժշկության կողմից, այլ ոսպնյակը: Մխիթար Հերացին գրել է. «Իսկ զկնի այդ Գ աստառիդ է գիջութիւն մի, զոր անուանեցին ղուճաճի, որ թարգմանի ապիկենի, զի նմանութիւն ունի սպիտակ ապիկոր վասն նորա կոշեցին այս անուամբս: Իսկ հետ այդոր է գիջութիւն մի, որ անուանեցին ճալիտի, որ թարգմանի սառնենի, յիստակ և պայծառ և բոլոր: Եւ գիտացիր, զի սառնենին փառավոր և պատուական զօդուածք է ի յաչքն, զի իւրովն լինի տեսանելին և զգայ զգունսն և զկերպսն... Եւ սառնենին ի մէջ աչացն որպէս գունդ մի է ի մէջ կալի, կամ կէտ մի ի մէջ բոլորակի: Եւ պատեն զնա և պահեն ամենայն աստառքն և գիջութեններն կան ի ծառայութիւն պատուականին, որ զահոկն ի յետ տանին և զբարին յառաջ բերեն հանապազ»⁷:

Համարյա նույնն է ասում Ամիրդովլաթը ոսպնյակի մասին. «Եւ այլ Բ գիճութեան ասեն ճալիտէ, և է ինքն յիստակ որպէս պաղ: Եւ Գ գիճութեան ասեն ղուճաճի, և է ինքն յիստակ որպէս զապակի հալած: Եւ այս բոռատուպաթի ճալիտին աչացն ի մէջն է, որ է տեսութիւն աչացն, որպէս որ բոլորակին մէջն դնես կէտ մի, և ինքն յիստակ է և պայծառ և փայլուն, և զինչ որ տեսնու՝ շուտով իմանայ. և իր կերակուրն ի ըռուտուպաթի ղուճաճուն է, այնոր համար որ ինքն ճալիտուն յետեն է, և ըռուտուպաթի պայլին առջնէ. և ճալիտուն ի ժիր ի կից լինին մէկ մէկի, և զօդին շորութիւնն ի յիմէն ի զատ պահէ»⁸: Այս երկու հավածները մեկը մյուսին շատ ավելի մոտ են, քան Գալենի համապատասխան նկարագրությունը, որը ստորև բերում ենք. «Так как хрусталик представляет собой вещество белое, прозрачное, блестящее и чистое, ибо только при этих условиях цвета могут воздействовать на него, он не мог получать питание прямо из крови. Тело, обладающее столь отличными свойствами, нуждается в более специальной пище. Поэтому природа создала и приготовила подходящую для него пищу—жидкость стекловидного тела. Насколько он гуще и более крови, настолько она уступает хрусталику по влажности и блеску. Ведь этот последний совершенно белый и умеренно твердый. А стекловидная жидкость представляет собой как бы расплавленное от жары стекло»⁹:

Հերացու և Ամասիացու աշխատությունների միջև այս կապը շատ ավելի ցայտուն է դառնում, երբ «Ջերմանց մխիթարութեան» հետ համեմատում ենք «Օգուտ բժշկութեան» գրքի այն գլուխները, որոնք նվիրված են տենդային հիվանդություններին: Այստեղ Ամիրդովլաթը հետևում է Մեծն Մխիթարի կլինիկական դասակարգմանը, ինչպես նաև վարակի մասին նրա «Երրորդ սային» տեսությունը, որը զգալիորեն տարբերվում էր անտիկ և արաբական բժշկության մեջ ընդունված պատկերացումներից, և ինչպես նկատել են է. Զալդելը և Լևոն Հովհաննիսյանը, մինչև անբաժանական շրջանի վարակածներից բոլորից մոտ են արդի պատկերացումներին¹⁰: Հենց միայն այս փաստը բավական լուրջ ապացույց է այն բանի, որ XV դարի հայ բժշկապետն օգտվել է «Ջերմանց մխիթարությունից»: Սակայն մենք ունենք և ուրիշ ծանրակշիռ փաստարկներ:

⁷ Արուստիդ. Ցաղաքս կազմութեան մարդու, էջ 181:

⁸ Ամիրդովլաթ Ամասիացի. Օգուտ բժշկութեան, խմբ. Ստ. Մալխաչյանցի. Երևան, 1940, էջ 89:

⁹ Гален. О назначении частей человеческого тела. М., 1971, с. 346.

¹⁰ Л. Оганесян. История медицины в Армении. Т. 2, с. 121.

Բնագրագիտական վերլուծության տվյալները վկայում են այն մասին, որ «Ջերմանյ միթթարութիւնը» եղել է «Օգուտ բժշկութեան» գրքի հիմնական աղբյուրներից մեկը: Այդ վերաբերում է առաջին հերթին «միօրեայ» կամ «ամէնօրեայ» ջերմերին կամ, այսօրվա պատկերացումներով, ալերգիկ հիվանդություններին: Հերացու գրքի «ամէնօրեայ» ջերմերի 16 ձևերից Ամիրդովլաթի մոտ նկարագրված են 12-ը: Սրանց նկարագրությունները տեղ-տեղ բառացի համընկնում են: Համեմատենք, օրինակ, «Օգուտ բժշկութեան» գրքի «Ամենօրեայ ջերմն», որ ի բարկանալոյ և ի հոգսէ լինայ» խորագիրը կրող ՄԵ զլուխը «Ջերմանց միթթարութեան» «Վասն միօրեայ ջերման, որ պատճառն ի սիրտ ելնելայն լինի» Թ՝ գլխի հետ:

Ամասիացին դրում է. «Նշան բարկանալուն այն է, որ աշվին ի տեղէն փոխի և ի դուրս գայ. և երեսն խիստ կարմիր լինայ և ուռի, և դողն կարմիր լինի: Ստածումն բարկանալուն. Մասըճուէն ասէ, թէ դեղն այն է, որ ի յեղկ ջուրն նստի և պաղ ջրով ճուլապ խմէ, և սանդալ և քաֆուր խառնէ և գլուխն օծէ, Բ ցեղ նուան ջուր տուր և հով կերակուրք և գէճ՝ շաքրով և նշի ձիթով, և բնալ դինի մի խմեր, և զբնութիւնն խնդութեամբ և գուսնով անուշցուր մինչև աղէկ լինայ»¹¹:

Հերացու մոտ ասված է. «Իւր նշանն այս է, որ աչքն ի յիր բնական գոյնէն փոխի և ի դուրս բարձրանայ, և երեսացն դոյնն խիստ կարմիր, և լինի, որ երեսն այտոյց առնու, և զոգն կարմիր դառնայ: Եւ իւր ստածումն այն է, որ եղկ ջրով ի յաւազանն մտէ, և ճուլապ հով ջրով խմէ: Ապա առ սպիտակ սանտալ և քաֆուր և վարդի ջուր. դայս ամէնս յիրար խառնէ, հար աղէկ և ի վերայ գլխոյն դիր: Խմելու քաղցր և թթու նուան ջուր տուր. և կերակուր հով և դէճ տուր, նշի ձիթով և շաքարով. և ամենեկն դինի մի տուր և զբաղեցու կատակով և ուրախարար խօսիւք»¹²:

Հալեմաշ ջերմերի, այսինքն հյուսիսի մասին Ամիրդովլաթը ՄԺԵ գլխում գրել է հետևյալը. «Իւր դեղն այն է, որ հանապազ գարէջուրն ի գործ արկանէ, և յորժամ ջերմն պակսէ, տուր խորված ձուկն և տուր զհով բանճրին, որպէս հազարն և փրփրեմն և որ նման է սոցա և ամէն օր ի բաղանիս մտէ և ի ժիր հով տեղ նստի. զանձն օծէ մանուշկի ձիթով և անուշահոտ ծաղկունքն հոտայ, որ հով լինայ. և հով տիմէտն ի կուրծքն դնէ յայն ժամն, որ կերակուրն ի ստամոքն թեթև լինայ: Եւ թէ ջերմն թեթև և խիստ տաք լինայ՝ զհով ձիթերն ի քիթն կաթեցուր, և քանի շատ ի քուն լինայ՝ լաւ է»¹³: Միթթարը համարյա նույնն է ասել «Ջերմանց միթթարութեան» ԻԲ գլխում. «Եւ իւր ստածումն այն է, որ հանապազ գարեջուրն ի բան պահէ: Եւ երբ տաքութիւնն անցանի, դալար մանր ձուկն խորված ուտէ և ի խաւարտնուն զհովն և զգիճային ի բան պահէ որպէս հազարն և փրփրեմն, զդալար գինձն և զոր նման սոցին: Ամենայն օր ի բաղանիս մտանէ, ի հով տուն նստի, զմարմինն մանուշկի ձիթով օծէ և հոտոտայ ի հով և ի զիճային ծաղկանցն և հով սպեղանիք ի վերայ կրծոցն դնէ և ըստամոքն, որ ի կերակրոյն թեթև լինի. յայնժամ ջերմանն տաքութիւնն խիստ լինի, զհով և զգիճային ձիթերն ի քիթն արկանէ, և որչափ կարէ զքուն լինելն ջանայ»¹⁴:

Դողերոցքի բուժման նպատակով Ամասիացին դիմել է մի շարք դեղաբույսերի օգնությանը. «Եւ այս ջերմիս ստածումն այն է, որ յառաջն զանձն սրբեն ի յայն խըլտէն, որչաք որ տաքութիւն և հովութիւն է ջերման. և շատ աւալուն դեղն՝ կամ սրքնճուպին սատակն և կամ պզուրին, կամ կուլանկուպին և մազտաքէն և ըռգիանի ջուր և դուրսի դաֆէթն և որ նման է սո-

11 Ա մ ի Ր դ ո վ լ ա թ Ա մ ա ս ի ա ջ ի. Օգուտ բժշկութեան, էջ 485:

12 Մ խ ի Թ ա Ր Հ ե Ր ա ջ ի. Ջերմանց միթթարութիւն, էջ 17:

13 Ա մ ի Ր դ ո վ լ ա թ Ա մ ա ս ի ա ջ ի. Օգուտ բժշկութեան, էջ 505:

14 Մ խ ի Թ ա Ր Հ ե Ր ա ջ ի. Ջերմանց միթթարութիւն, էջ 46:

ցա. օգտէ աստուծով»¹⁵, նույն խորհուրդներն է տալիս Հերացին «Վասն ստածման և բժշկութեան հինգօրեայ և վեցօրեայ ջերմանն» ԽԳ գլխում. «Այս ջերմերոյս ստածումն այն է, որ յառաջ ղգլուխքն հիվանդութեան ի մարմնոյն սրբէ ըստ տաքութեան և ըստ հովութեան և ըստ հիւանդին զօրութեանն. և զիւր ջանքն աւելի ի սատակ սքնճպինն այն է, կամ ի հնդանօք սքնճպինն, մեղրով վարդ մարապայ և մաղտաքէ և բաղիանի ջուր և ղափթի կուրսն և զոր ինչ նման են սոցա՝ ի բանի պահէ. օգտակար է, թէ աստուած կամի»¹⁶:

Այսպիսով, Ամիրդովլաթը «Օգուտ բժշկութեան» գրքում հաճախ է դիմել «Զերմանց մխիթարութեանը»՝ մեջբերումներ կատարելով տարբեր բաժիններից, որոշ դեպքերում էլ շարադրելով նյութը ազատ կամ համառոտաժ: Սակայն իբրև կանոն նա ոչ մի տեղ չի նշում «Մեծն Մխիթարի» անունը:

Լուրջ հետաքրքրություն է ներկայացնում «աւագ հեքիմարանի» կամ «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» առնչությունների հարցը Ամասիացու դեղագիտական աշխատությունների հետ, որը վրիպել է հայ բժշկապատմաբանների ուշադրությունից: Վերոհիշյալ բժշկարանի խմբագրական տարբերակների ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ նրա գրչագրերից մեկում (որը կոչվում է «Հովհաննէս հաքիմի բժշկարան») ղեկավարած «Անուանք դեղերոյ» հայերեն-արաբերեն-լատիներեն բառարանը եղել է «Անգիտաց անպէտի» աղբյուրներից մեկը¹⁷:

Հուլի կարևոր է «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» և Ամիրդովլաթի երկրորդ նշանավոր դեղագիտական գործի՝ «Ախրապատինի» (1481) համեմատությունը: Ժամանակին Ղ. Հովնանյանը նկատել է երեք դեղատոմսերի (հապ սապոի, մտպուխ թեթև, ձէթ նարդի) ընդհանրությունն այդ աշխատություններում¹⁸: Բնագրագիտական համեմատությունների շնորհիվ մեզ հաջողվեց պարզել, որ Ամասիացին իր «Ախրապատինի» մեջ ներ է մտնել «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» գրեթե բոլոր գլուխները, որոնք վերաբերում են բարդ դեղանյութերին («Վասն ամենայն ցեղ մտպուխնոյ», «Վասն ամենայն ցեղ հապերոյ և թոջած սապոի», «Վասն ամենայն ցեղ մանր լուծման դեղերոյ», «Վասն ամենայն ցեղ խուռսերոյ», «Վասն ամենայն ցեղ մաճունոյ», «Վասն ամենայն ցեղ լոպխերոյ, որ թարգմանի լիզելիք և մատամբ աովի», «Վասն ամենայն ցեղ ըմբելխստնոյ», «Վասն ամենայն ցեղ ձիթերոյ», «Վասն այլ մաճունոյ և ըմբելխստնոյ»): Հարկ է նշել, որ Ամիրդովլաթն օգտագործել է «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» վերոհիշյալ գլուխներից ոչ թե առանձին դեղատոմսեր, այլ ամբողջ նյութը՝ նույնիսկ լիախտելով դեղատոմսերի հերթականությունը: Մեծ կարևորություն տալով հնագույն հայկական դեղագիտարանին, նա տեղադրել է սրանից կատարած ծաղկաքաղն իր «Ախրապատինի» համապատասխան բաժիններում՝ մտպուխներին, հապերին, լուծման դեղերին, լիզելիքներին, մաճուններին, ղուրսերին, ձիթերին, շարապներին և այլ բարդ դեղանյութերին նվիրված գլուխներում: Ստորև բերված են կատարած համեմատությունների արդյունքները:

¹⁵ Ամիրդովլաթ Ամասիացի. Օգուտ բժշկութեան, էջ 507:

¹⁶ Մխիթար Հերացի. Զերմանց մխիթարութիւն, էջ 131:

¹⁷ Ս. Վարդանյան. Ամիրդովլաթ Ամասիացին և միջնադարյան հայ բժշկական տեղեկանքությունը. — «Պատմա-բանասիրական հանդես», 1990, № 4, էջ 116:

¹⁸ Ղ. Հովնանյան. Հեղաղոտութիւնը նախնեաց ռամկօրէնի վրայ, մասն Ա, Վիեննա, 1897, էջ 146—151:

Ամիրդովյաթ Ամասիացի. «Ախրապատին»,
Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 414,
էջ 393 բ—394 ա

«Գաղիկ-Հեթումյան բժշկարան», Վենետիկի.
Մխիթարյան միաքանության ձեռ. № 1281,
էջ 28—29

ԻԳ. Մազուխ

Առ դեղին հալիւայ ի կորզէն հանած և
ձարձատած՝ է դրամ և քապուլի հալիւայ՝ ի
կորզէն հանած և ձարձատած՝ Դ դրամ, կա-
ղայի ունդ կտուած և խարբզկի ունդ՝ Դ—Դ,
թմր հնտի՝ ի զրամ, եզրկական տակ և
կամ դինք, և քշութ, որ է գալլխոտն, ի յալ-
դիքն լինի, որպէս բաղնիք՝ Բ—Բ դրամ,
յունապ և դամոյն լիւր՝ Ի—Ի դրամ, շէկ շա-
միլ ի կտէն հանած՝ Ի դրամ, մանիշակ՝
Դ դրամ և թէ դալար լինի՝ Զ դրամ, մատու-
տակ քերած և ձարձատած և շոր դինձ ծե-
ծած, և բողիանի ունդ՝ յամէն մէկէ Բ դրամ,
ծոր՝ Ե դրամ, կարմիր վարդ շոր՝ Գ դրամ,
զայս դեղերս ծողծէ, ի սուրբ պտուկ արկ
և արկ ի վերայ շուր՝ լիտր և կէս, և օր մի
և գիշեր մի ի թրշման պահէ, և ասլայ եփէ,
որ վնա կէս լիտր, և սպրկիկ կտաւով քա-
մէ: Եւ առ ունա և տապաշիր՝ կէս-կէս
դրամ, աղայ մանտր և ի մտպուխտ խառնէ
և տուր խմելոյ, որպէս դեղին ըռամն է
աղէկ: Եւ թէ յերկորէն տաս և թէ ի ժամ-
հարքն, թող ալ ի քուն լի լինի, ինչուր
յիստիկ ի դեղէն: Եւ թէ սիրտն ճմլատի,
անուխ տուր ծամել և նոան հատ և ի քա-
ցախն թող հոտոտայ: Եւ երբ յստկի ի դե-
ղէն, տուր որ խմէ ճուլապ՝ Ժմ դրամ և
դրամ տաք շրով: Եւ երբ դաղարէ լուծումն,
առ պղղատուն՝ Բ դրամ և տուր Ժմ դրամ
ճուլապով և հով շրով, և ասլայ ի բաղանիս
ած: Եթէ լլինի բաղանիս, ի տաք շուր,
և ասլա հաց տուր, որ ուտէ հաւ ձագ կամ
գառին միս տալ պահակ և զամին և Գ
կխթայ ջրախառն անուշ գինի թող խմէ,
բայց պակաս տուր ուտել:

Զ. Վասն ամենայն զեղ մազուխներոյ

Առաջին այս. առ դեղին հալիւայ սրած.
ի կտէ և ձարձատած՝ է դրամ, որպէս կօ-
ղաի հունդ կտուած և խարբզկի հունդ՝ Դ—
Դ դրամ, թպր հնդի՝ Ի դրամ եղրդակի,
տակ և կամ դինք, և քշութ, որ է գալլ խո-
տն, յալդիքն լինի որպէս բաղնիք՝ Է՝ Բ—
Բ դրամ, յունապ և դամոյն լիւր՝ Ի—Ի
հատ, շէկ շամիլ ի կտէն հանած՝ Ի դրամ,
մանիշակ՝ Դ դրամ, և թէ դալար լինի՝ Զ
դրամ, մատուտակ քերած և ձարձատած, և
ի շոր գինձ ծեծած, և բողիանի հունդ՝ Բ—Բ
դրամ, ծոր՝ Ե դրամ, շոր կարմիր վարդ՝ Գ
դրամ: Լից զամէնտ ի սպրկիկ պտուկ և-
լից ի վերայ շուր՝ լիտր մէկ ու կէս և օր
մի և գիշեր մի ի թրշման դիր և ասլա եփէ,
որ կէս լիտր մնա: Փամէ սպրկիկ կտա-
ւով: Եւ առ ունա և տապաշիր՝ կէս-կէս
դրամ, աղա մանդր և ի մտպուխտ խառնէ
և տուր խմելոյ, որպէս դեղի ուսմն է եղի:
Եւ թէ յերկորէն տաս, թէ ի ժամհարքն,
թող ալ ի քուն լլինի, ինչուր յիստիկ ի
դեղէն: Եւ թէ սիրտն ծայծի, անանուխ տուր
ծամել և ի նոան հատ և ի քացախ թող.
հոտա: Եր յիստիկ ի դեղէն, տուր որ խմէ
ճուլապ՝ Ժմ դրամ և դրամ տաք շրով: Եր-
դաղրէ լուծումն, առ պղղատուն՝ Բ դրամ
և տուր Ժմ դրամ ճուլապով և հով շրով:
Եւ ասլա ի բաղնիս ած, թէ լլինի բաղնիք, ի
տաք շուր: Եւ ասլա հաց ուտէ հաւ ձագ և-
գառին միս տա պահակ և զամին և Գ կխթայ
ջրախառն անուշ գինի, բայց քիչ տուր-
ուտել:

Եւ. Մազուխ որ օգտէ սաֆրայի և սավալայի
և պղղամի (էջ 394ա)

Առ դեղին հալիւայ հանած ի կտէն և ձար-
ձատած և թպր հնտի ի կտէն սրած՝ Ի—Ի
դրամ, յունապ՝ ԻԱ հատ, դամոյն լիւր՝ ԺԱ
հատ, խորանանի շամիլ ի կտէն սրած՝ Ի
դրամ, լից զամէնտ ի պտուկ և լից ի
վերայ շուր՝ Ա լիտր, եփէ, որ կէսն մնա և
պարզէ և առ յիրմէն ձմ դրամ և թրպութ
և խարիկոն աղցած և մաղած՝ դրամ-դրամ:

Ալլ մազուխ որ օգտէ սաֆրայի և սօտայի
և պղղամի (էջ 29)

Դեղին հալիւայ հանած ի կտէն և ձար-
ձատած և թպր հնդի ի կտէն սրած՝ Ի—Ի
դրամ, յունապ՝ ԻԱ հատ, դամոյն լիւր՝ ԺԱ
հատ, խորանանի շամիլ ի կտէն սրած՝ Ի
դրամ, լից զամէնտ ի պտուկ և լից ի
վերայ շուր՝ Ա լիտր, եփէ, որ կէսն մնա և
պարզէ և առ յիրմէն ձմ դրամ և թրպութ
և խարիկոն աղցած և մաղած՝ դրամ-դրամ:

1	2
և շաքար՝ ժն դրամ և թրպուր և խարիկոն աղցած և մաղած՝ մէկ դրամ: Զամէնդ յիրար խառնէ և խմելոյ տուր տաք որպէս այլ դեղի ըսասան է:	Զամէնտ յիրար խառնէ և տաք խմելոյ տուր որպէս այլ դեղի ըսասան է:
ԿԵ. Հապ անկուծատի, որ օգտէ շորեֆօրեայ սարսափին (էջ 375 ք) Առ անկուծատ՝ կէս դրամ, դեղին հալիլա և զաֆէթի քամուքս՝ Բ—Բ դրամ, հուրփ, որ է սպիտակ մանեխին հունդն՝ Ա դրամ. զամէնդ աղայ և մաղէ և ջրով շաղէ և երբ պիտենայ, տուր Ա դրամ տաք շաքրջրով, և ակտէ Աստուծով:	Հապ անկուծատի՝ օգտէ Դօրեա սարսափի (էջ 39—40) Անկուծատ՝ կէս դրամ, դեղին հալիլա և զաֆէթի քամուքս՝ Բ—Բ դրամ, հուրփ, որ է սպիտակ մանեխին ունդն՝ դրամ Ա. աղա, մաղէ, ջրով շաղէ, հապեր արա և տուր դրամ Ա տաք ջրով:
ԻԴ. Լուծման դեղ, որ ասեն իրենդ անուն ալ սիրտու, որ հաճէ յանձնէն դայրած մաղան և օն մաղան և զպլղամն (էջ 371 ա) Առ շարուն, որ է կաղնշանին տակն, դայն որ ի Մծրնայ բերեն՝ Դ դրամ, աֆթիմոն կրեաացի և սապո՝ Բ—Բ դրամ, կարօսի ունդ և քրմենի շաման և քարաւէ և անխոն՝ յամէն մէկէ դանկ ու կէս, հալիլայ դեղին ի կորդէն հանած՝ Բ դրամ: Զամէնդ աղայ և մաղէ և երբ պիտենայ, տուր մէկ առնելոյն կէս տաք ջրով:	Լուծման (դեղ), որ կռչի արտիքում, հաճէ զայրեցած մաղան և զօն մաղան և զպլղամն (էջ 43—44) Առ շարուն, որ է կաղնշանին տակն, դայն որ ի Մծրնայ բերեն՝ Դ դրամ, աֆթիմոն կրեաացի և սապո՝ Բ—Բ դրամ, կարօսի ունդ և քրմենի շաման և անխոն՝ յամէն մէկէ դանկ մէկ ու կէս, դեղին հալիլա կտված՝ Բ դրամ: Աղա, մաղէ և տուր դրամ մէկ ու կէս տաք ջրով. օգտէ:
ԿԱ. Դուրս ասպաշի, որ օգտէ ջերմայ և ծարաւայ և քր կապ լինի բնութիւնն (էջ 385 ա) Առ տապաշիր՝ դրամ Դ և թառանկուպին՝ դրամ Ե, կաւալի ունդ և դղմի ունդ կեղեւած՝ Ե—Ե դրամ, խաշիաշ սպիտակ, տաճիկ կոէղ և նշաստակ և դազի խէժ՝ յամէն մէկէ դրամ Ա: Զամէնդ ծեծէ և մաղէ և պղրդատունի լղապով շաղղէ և զուրսեր աբայ՝ դրամ-դրամ և ի շքի շորցո և երբ պիտենայ, տուր դարէջրով յերկու դրամէն ինչովի (Բ) ըստ ուժոյն, յեսէ և ի վերայ գարէջրին աս:	Թ. Վասն ամենայն ցեղ խոտսերայ, ասպաշին խոտս ասպաշի, որ օգտէ սուր ջերմոս և ծարաւ և որ կապ լինի ի բնութիւնն (էջ 44) Տապաշիր՝ Դ դրամ, թառանգին՝ Ե դրամ, կոգաի և դղմի ունդ կեղեւած՝ Ե—Ե դրամ, խաշիաշ սպիտակ, տաճիկ կոէղ, նշա, դազի խէժ՝ դրամ-դրամ: Ծեծէ, մաղէ, պղրդատունի լղապով շաղղէ, խոտսեր արա՝ դրամ-դրամ, ի շքի շորցո և դարէջրով տուր Բ դրամ կամ Ա, լեսէ և ի վերայ դարէջրոյն լից:
ՃԺԲ. Մանուն նոսն. որ օգտէ երբ մարդայ խիտ հաղ լինայ դիպել և զկուրցէն պնդել լինի և որ ի ջերմութենէ զջերմութիւնն հաճէ և գարիւնն խաղցնէ և ամենայն ջերմացու օգտէ (էջ 402 ա) Առ քաղցր նոսն հասուն և թափէ ի սուրբ ամանն և ի ճրագունէն յիստէ և ձեռքդ քամէ և պարզէ կտաւով և ի սուրբ աման արկ և շրիդ շաք Թ շաքար արկ ի վե-	Մանուն նոսն օգտէ խիտ հաղի և սիւնտ կրծոց և որ ի տափէ ցափ ստամոքն կամ լերդն, գառափութին, գարոյն և գամենայն տափ ցառ հաճընգէ (էջ 55) Քաղցր նոսն կտված հան զշուրն և կտաւով քամէ և ջրին շաք Բ տարպա շաքար լից ի նոնշուրն և եփէ յեղմ և զփրփուրն առ, ինչուր աղէկ եփի, ու թանձրանա և

1

2

րայ և ի կրակն դիր և ընդ մեղմ հիւն և զփրփուրն ած, ինչուր աղէկ հիւն և թանձրանայ, և ասլայ տաճիկ կոչող և քիթրայն՝ Ծ-Ծ դրամ, Զիրենքող աղայ և մաղէ և ի սուրբ յաման արկ և ած ի վերայ ի դրամ եռ շուր և հար, որ աղէկ լոսի, և զինքող ի յեփած նուռն խառնէ և ալլ հիւն աղէկ, ինչուր թանձրանայ և պնդի, և ասլայ յետ առ և ի սուրբ աման դիր, և երբ պիտենայ, տուր ըստ մարդոյն կարեցն և ի մի դրամէն ինչվի Գ դրամ տուր յանօթեց և ի կշտկեաց:

սամխ, քթիրա՝ Ծ-Ծ դրամ, աղա, մաղէ և լից ի վերայ եռ շուր՝ ի դրամ և հար, որ աղէկ լոսի, և յեփածն նուռն խառնէ և ալլ հիւն, որ թանձրանա և պնդի, և տուր դրամ՝ Ա կամ Գ յանօթեց:

Ա. Վասն լուսնակաթին, որ քարզմանի լգելիք, որ մաւամբն Կովի (էջ 371 ք)
Ա. առաին լուսնակաթի, որ օկտակաթ է ցոլ ցաւու

ԺԱ. Վասն ամենայն ցեղ լուսնեայ, որ քարզմանի լիգելիք և մօտամբ առվի. առաին լուսնի խառնի, որ օգտէ սլլ ցաւուն (էջ 61)

Առ սև խաշխաշ՝ Ժ դրամ, պղրդատուն՝ Գ դրամ, խոպաղի և թաղթի ունտ՝ է—է: Զամէնդ ծնծէ զարդ ի պղրդատունէ և յարկ ի յաման մի դալս դեղերս և ի վերայ լիտր մի շուր, որ է ժի դրամ, և հիւն մեղմ, ինչուր կէսն մնայ, և ապայ քամէ զինքող և խառնէ յայտ քամած շուրդ լիտր սր պնդիթ շաքար և առ տաճիկ կոչող՝ ԺԾ դրամ և խաշխաշ՝ Ժ դրամ և զայդ ալլ ծնծէ և ի ներս խառնէ և աղէկ միաւորէ և յաման դիր և պահէ, և երբ պիտենայ, տուր առնուլ մատն մի վաղն և մատն մի յիրիկունն. և աւղտէ Աստուծով:

Խաշխաշ սև՝ Ժ դրամ, պղրդատուն՝ Գ դրամ, խոպաղի և թաղթի ունտ՝ է—է: Զամէնտ ծնծէ զարդ ի պղրդատունէ, լից ի վերայ շուր՝ ժի դրամ, էփէ յեղմ, որ կէսն մնայ, քամէ և դիր ի ներք պնդիթ շաքար՝ լիտր Ա. և առ ստմխ՝ ԺԾ դրամ, խաշխաշ՝ Ժ դրամ, ծնծէ և յալլ խառնէ, որ միանան, տուր մատն մի վաղն և մատն մի յիրիկունն:

ԿԳ. Ամենացեղ ըմպելի, որ է ի Յեսսէ բժշկական քաղցրեմ և փորձի գրած (էջ 413 ք)

ԺԲ. Վասն ամենայն ցեղ ըմպելի, որ է ի Յեսսէ բժշկիկ. եռալայնայն և փորձի գրած (էջ 63)

Յառաջ զսերկելի սքնչպինն դրենք, որ օկսէ ստամոքաց վառութիւնն, որ սւտուլնէ և պնդէ և լշտուանն և ասլայ և սերկելի հասուն և սրբէ նոյն կեղեկովն և կտրտէ և դիւտն ձգէ և ի սանդ ած և ծնծէ և քամէ ձեռքող և ալլ շուր մի արկանես ի վերայ, զիւր շուրն մէն առ և լից ի քարեղէն մի և վալր դիր, որ յիստիկ և առ զպարզն ի յայդ շրէդ և արկ ի կլայկած պղինձն և կամ ի սուրբ պտուկ և ալլ ի ներս շաքար է լիտր և քաղախ՝ Կ զրամ և

Յառաջ դրենք զսերկելի սքնչպին, որ ուծովցնէ և պնդէ զստամոքն և բանայ զշահուանն: Սերկելի հասուն սրբէ նոյն կեղեկովն, կտրտէ, զկուտն ձգէ, ի սանդ ծնծէ և ձեռքող քամէ, զիւր շուրն մէն առ և դիր, որ յիստիկ, և զպարզն առ ի սուրբ աման և լից ի վերայ ծ լիտր շաքար և քաղախ՝ Կ դրամ, յեղմ էփէ, որ լինի թանձր քան զճուլաղ և ծակուած փայտէ շերտիով զփրփուրն առ և առ վարդի շուր՝ կէս լիտր և հիւն քիւ-քիւ, ի ներք լից, եր էփէ, ի

ի կրակն դիր և ընդ մեզմ էփէ, որ քան շիշ ատ և տուր ժն կամ Ի դրամ և քանի զճուլապ այլ թանձր լինի, և փայտէ շն- շաքար՝ Բ շուր:

րեփով, (որ) ծակտած լինի, զփրփուրն առ և առ վարդի շրով կէս լիտր և հետէն ի փրփուրին առնուլն սակավ-սակաւ ի ներս լից. և երբ եփի, ի վայր առ ի կրակէն և հովցոյ և ի շիշ արկ, և երբ պիտենայ, տուր ժմուն ժն և կամ Ի դրամ և ըմպելոյն շաք Բ շուր արկ ի ներս և տուր:

Մեկ կարևոր հանդամանք ևս. քանի որ Ամասիացու «Ախրապատինը» կառուցված է այբբենական սկզբունքով, իսկ «Գագիկ-Հեթումյան բժշկարանում», որը ստեղծվել էր մոտավորապես հինգ դար առաջ Անիում, այդ սկզբունքը դեռևս չէր կիրառվում, այսպիսով Ամասիացին կատարել էր որոշ խմբագրական աշխատանք՝ ներմուծելով իր գրքի մաճունների բաժնում անիական դեղադիրտարանի համապատասխան երկու գլուխներ՝ «Վասն ամենայն ցեղ մաճուննոյ» և «Վասն այլ մաճուննոյ և ըմբելեստնոյ»: Կատարած համեմատությունից պարզ երևում է, որ այստեղ գործ ունենք նույն բնագրի երկու խմբագրական տարբերակների հետ՝ որոշ տերմինաբանական, բարբառային և ուղղագրական փոփոխություններով հանդերձ (հալիւթյ-հլիւիճ, ռե-վանդ-ռևան, պղրդատու-պղրդատուն, թառանկուպին-թառանգին, նշաստակ-նշա, լուղուկաթ-լուղիս, դուրս-խուրս-խօռս, հունդ-ունտ-ունդ, անուխ-անա-նուխ, կաւդայ-կողա-կօգա, ած-արկ, ճմլատի-ժայժի և այլն):

Ամիրդովլաթի հայկական աղբյուրների ուսումնասիրության կարևորությունը կասկած չի հարուցում: Սրանց բացակայությունը մի կողմից և օտար աղբյուրների առատությունը նրա գործերում մյուս կողմից, որոշ գիտնականների առիթ են տվել Ամասիացուն լոկ թարգմանիչ համարել, իսկ նրա գործերը վերագրել արաբ կամ պարսիկ հեղինակներին: Դրան նպաստել է մեկ այլ հանգամանք ևս: «Անգիտաց անպէտում» հեղինակը խոսում է իր մասին ոչ միայն առաջին դեմքով՝ «ես», անպիտան Ամիրդովլաթ», այլև երրորդ դեմքով՝ «գրոցս ժողովողն» կամ «գրոցս շինողն», ինչպես այդ ընդունված էր միջնադարյան արևելյան դեղագիրտարաններում: Այս ոճով է գրել նաև Իբն Բայթարը¹⁹: «Անգիտաց անպէտի» առաջին հրատարակիչը՝ Կարապետ Բասմաջյանը գրել է. «Խոստովանինք, սակայն, թէ այս մեջբերումներէն կրնայ հետեւցուիլ, որ գրոցն շինողն ու Պատէհին միևնոյն անձնաւորութիւնն է. այս մերձեցումը զիս ալ հրապուրած է ժամանակ մը. բայց Ամիրդովլաթ կը յայտարարէ, թէ գրոցն շինողն» զՄինհաճին խաւաքն է ընդունէր ամերժելով Պատէհինի և Ճամէի վարկածները. ուրեմն ամենևին տարակույս չի մնար այլևս իմ ենթադրութեան»²⁰:

Ամասիացու աշխատությունների հայկական աղբյուրների բացահայտումը մեծ դեր է խաղում մեր ազգային գանձերի օտարացման փոոճերը կանխելու գործում: Այս առումով հարկ եմ համարում անդրադառնալ է. Արուստ-ձեի որոշ հրապարակումներին, որտեղ վերջինս ձգտում է ապացուցել, որ «Օգուտ բժշկութեան» հեղինակը լոկ թարգմանիչ է եղել ինչ-որ չհայտնաբերված արաբական կամ պարսկական աղբյուրի²¹: Սույն եզրակացությանը նա հանգել է ելնելով այն փաստից, որ վրացերեն լեզվով գոյություն ունի մի

¹⁹ Амирдовлат Амасиаци. Ненужное для неучей, комментированный перевод С. А. Варданян. М., 1990, с. 521.

²⁰ Ամիրդովլաթ Ամասիացի. Անգիտաց անպէտ, առաջարան, էջ ԺԵ:

²¹ Ի. Արուստ-ձե. Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան» աղբյուրի հարցի շուրջ. — «Սոս-վետական գրականություն», 1941, № 12, էջ 102:

բժշկական բնագիր, որի բովանդակությունն ամբողջությամբ համընկնում է «Օգուտ բժշկութեան» գրքի հետ:

Այսպիսով, մի կողմից հիշյալ գործի տասնյակ գրչագրեր միջնադարյան հայ մատենագրության մեջ և մյուս կողմից՝ միակ վրացերեն ձեռագիրը, որը ըստ Ի. Աբուլաձեի հասել է XV դարի գրչագրով²², նման պարականրոմ ավելի բնական չէ՞ր լինի մտածել, որ վրացերեն բնագիրը թարգմանված է հայերենից, քանզի վրացական միակ հիշատակարանում նշված չէ սկզբնաղբյուրի լիզուն, սակայն պարզ ասված է, որ այն իբրև ավար վերցրած է հղիլ հայկական Կարին քաղաքում: Անտեսելով այս ամենը, առաջ է քաշվում մի վարկած՝ արարական կամ պարսկական սկզբնաղբյուրի մասին, որից հավասարապես օգտվել են և՛ հայերը, և՛ վրացիները: Ուստի հարցականի տակ է դրվում Ամիրդովլաթի հեղինակության հարցը: «Օգուտ բժշկութեան» առաջաբանում հեղինակը գրել է. «Եւ այլ իմացիր, հղբայր, որ գիրքս մեր խօսքն չէ. առաջի իմաստասիրացն և բժշկական իմաստասիրացն և վերջին փիլիսոփայիցն և այս ամէն բժշկացն խօսքն է, որ է Բագարատն, և Դեղիանոսն, և Արճիճանիսն, և Ֆլուան, և Արպիասօոն, և Ռուֆոսն, և Դէվճանիսն, և Մասրճուէն, և Յեսուն, և Մասուվայի որդին, և Ապուճարհն, և Մասհն, և Մահամատ Զաքարիային որդին, և Սապիթ Կուռան, և Հունան, և Իսաղն, և Սինայի որդին, և Դիատողն, և Եհաննան և այլ բազում ժողովուրդ, որ ի յայս արուեստս շատ աշխատել են: Մենք սոցա զգիրքն ընտրել ենք և գրել շատ աշխատանօք և այսմն հետէ գրեցի շատ աշխատանօք զայս ձեռամբ իմով»²³:

Այսպիսով, Ամասիացին բնավ էլ չի թաքցնում իր օգտագործած օտար աղբյուրները, լինեն դրանք հույն, արաբ կամ պարսիկ հեղինակի գործ, ուստի խոսք չի կարող լինել ինչ-որ արաբ կամ պարսիկ հեղինակի գրքի թարգմանության մասին: Այստեղ հայ բժշկագետը համադրել է իր փորձը համաշխարհային բժշկության տվյալների հետ: Մեջբերումներ կատարելով վերոհիշյալ հեղինակների աշխատություններից, նա հաճախակի նշել է իր անունը. «Եւ նուստ ծառայ Ամիրդովլաթն փորձեցի տղայոց ցաւուն զայս» կամ՝ «Եւ անարժան ծառայս Ամիրդովլաթս զտարունաճն խիստ փորձել էի և օգտեցայ Աստուծոյ կարողութեամբն. ամէն»²⁴, Կան և այլ բազմաթիվ օրինակներ: Մյուս կողմից, «Օգուտ բժշկութեան» և Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութեան» համապատասխան հատվածների համեմատությունը վկայում է այն մասին, որ Ամասիացին հիմնվել է վաղ շրջանի հայկական բժշկական ավանդույթների վրա, որոնք սերվում են Անիի ու Կիլիկիայի բժշկական դպրոցների փորձից:

Այժմ անդրադառնանք վրացերեն ձեռագրի (Վրաստանի ԳԱ, Ձեռագրերի ինստիտուտ, Ֆոնդ S. 1274)²⁵ և Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող «Օգուտ բժշկութեան» գրչագրերի (ձեռ. №№ 414, 453, 5847, 6275, 7731, 7752, 8052, 9467, 9837, 9844) առնչությունների հարցին²⁶: Ինչպես

²² Հետազայում գրության ժամանակը մեկ, ապա երկու դար առաջ է տարվել՝ հասցրվելով XIII դար (տե՛ս Ի. Աբուլաձե, Աշխատություններ. հ. IV, Քրիտիկ, 1985, էջ 64—72; К. Д. Эристави, П. Г. Гелбахиани, М. Г. Саакашвили, А. П. Гелашвили. Медицина Грузии. Т. I. Тбилиси, 1967, с. 46, 90, 93).

²³ Ամիրդովլաթ Ամասիացի. Օգուտ բժշկութեան, էջ 7:

²⁴ Նույն տեղում, էջ 166, 515:

²⁵ Ձեռքի տակ, ցավոք, չունենալով «Ծիզնի սաակիմոն» բնագիրը, որը հրատարակվել է 1936 թ. Լոգոս Կոստանիշվիլու կողմից, օգտվել ենք նրա ռուսերեն թարգմանությունից, որը զետեղված է Կ. Էրիստավիի և այլոց «Медицина Грузии» գրքի վերջում որպես հավելված:

²⁶ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Նրևան, 1965, էջ 315, 323, հ. Բ, 1970, էջ 195, 285, 599, 604, 662, 934, 1001, 1003:

ժամանակին նշել է Ստ. Մալխասյանցը. «Օգուտ բժշկութեան» գրչագրերի մեծամասնությունը պատկանում է հնագույն մայր-օրինակին և միայն մի քանիսը՝ Բունիաթ Սեբաստացու խմբագրությանը (1625 թ. հետո)²⁷։ Այդ երկու ձեռագրախմբերի միջև կա որոշակի տարբերություն։ Հնագույն տարբերակում «Օգուտ բժշկութեան» գրքի առաջին մասից բացակայում է մի ընդարձակ հատված՝ «Եւ մարդակազմութեան այլ գրոցն» վերնագրով²⁸, ինչպես նաև դեղերի նկարագրությունը, իսկ երկրորդ մասից՝ «Որոյ գլուխն կոտորի և կամ ոսկր և կամ զախմի անձն» իբր գլուխը, «Մալխասյանց», որ է ինքն խելաց պակասութիւն և խէվութիւն», իբր գլխի վերջին մասը և մի քանի այլ կտորներ։ Ի. Աբուլաձեն այս տարբերությունները նկատել է նաև վրացերեն բնագրում, սակայն դիտում է որպես լոկ հայերեն ու վրացերեն բնագրերի տարբերություն։ Սակայն բնագրագիտական համեմատությունը պարզ ցույց է տալիս, որ վրացերեն բնագիրը համապատասխանում է հնագույն հայկական տարբերակին։ Այսպես, օրինակ, Ի. Աբուլաձեի կողմից նշված վրացերեն բնագրի 131 և 216 գլուխները, որոնք բացակայում են Բունիաթի կողմից խմբագրված ձեռագրերում, առկա են հնագույն հայկական տարբերակում (ՃԼԲ ու ՄԺԸ գլուխներ)։ Նույնը կարելի է ասել «Թուլութիւն անդամոցն», որ է ըստիս» վրացերեն բնագրի 47 գլխի մասին, որը առկա է հայկական հնագույն տարբերակում (գլուխ ԽԷ), սակայն բացակայում է Բունիաթի խմբագրության մեջ։ Որոշ դեպքերում էլ հանդիպում ենք գլուխների տեղափոխության կամ հայերեն բնագրի մեկ գլխի դիմաց վրացերենում՝ երկուսի։ Օրինակ, հայերենի ՃԼԲ գլխին համապատասխանում են վրացերենի 131 և 132-րդ գլուխները։ Ընդհանուր առմամբ վրացերեն բնագրի գլուխների թիվը (ըստ ցանկի 218) զիջում է հայերենի հնագույն տարբերակին (ՄԻԴ)։

Անտեսելով այս լուրջ բնագրագիտական փաստերը, Ի. Աբուլաձեն այն միտքն է հայտնել, որ վրացերեն «Յիզնի սաակիմոին», որից իբրև թե ծագել է Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան» գիրքը, «կարող է հայերեն հրատարակության բնագիրը որոշ տեղերում ուղղել»²⁹։ Որպես միակ օրինակ այս բանի վկայակոչվում է հայերեն բնագրի ՄԺ գլուխը՝ «Ջերմն», որ ի տքնութենէ լինի և ի ցաւոց և ի խիար ուռէցէն», որտեղ Ստ. Մալխասյանցը քրնական բնագիրը կազմելիս և ձեռքի տակ ունենալով բազմաթիվ գրչագրերում «տքնութենէ» ճիշտ ձևը, սխալմամբ ընտրել է «տաքութենէ» տարբերակը, ինչը բացատրվում է նրա բժշկ շինելու հանգամանքով³⁰ (հիշենք, որ Ամիրդովլաթից երեք դար առաջ Մխիթար Հերացին «Ջերմանց մխիթարութեան» ԺԱ գլխում առաջինն է անդրադարձել «միօրեայ ջերմերի» այն տարատեսակին, որի հարուցիչն է տքնությունը)։ Նման վրիպումներ մենք իհարկե ի վիճակի ենք ուղղել, քանզի գոյություն ունեն «Օգուտ բժշկութեան» գրքի տասից ավելի գրչագրեր Մաշտոցի անվան Մատենադարանում և մոտավորապես այդքան էլ Վենետիկի, Վիեննայի ու Երուսաղեմի հայկական ժողովածուներում, հարկ եղած դեպքում դիմելով և վրացերեն բնագրին։ Սակայն այս առումով հայկական հնագույն տարբերակի ձեռագրախումբը շատ ավելի պիտանի կարող է լինել վրացերեն բնագրի բացթողումները վերականգնելու համար։ Բերենք մի քանի օրինակ, հատկապես անդրադառնալով այն գլուխներին, որտեղ վրացերեն բնագրում առկա են բացթողումներ, կամ էլ ուղղակի ընկած են թերթեր։

27 Ամիրդովլաթի Ամասիացի. Օգուտ բժշկութեան, առաջաբան, էջ ԻԶ—ԻԸ։

28 Վերջինս իրենից ներկայացնում է մի պատահիկ (12 գլուխ) Արուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյ» գրքից (տե՛ս С. А. Варданян. Амирдовлат Амасиаци—армянский естествоиспытатель и врач XV в. М., 1987, с. 46)։

29 Ի. Աբուլաձե. Ամիրդովլաթի «Օգուտ բժշկութեան» աղբյուրի հարցի շուրջ, էջ 102։

30 Ամիրդովլաթի Ամասիացի. Օգուտ բժշկութեան, էջ 495։

Ամիրզովլաթ Ամասիացի. «Յոդուս բժշկութեան» (ըստ Ստ. Մալխասյանցի հրատարակության, էջ 36)

«Ցիզի սաակիմի» (ըստ Լ. Կոտետիշվիլու ռուսերեն թարգմանության (էջ 397)

1

2

Կենդանի աղվորներում եւ յօրինվածոցն եղիւն

Состояние кишок

Գիտացիր, որ յօրինվածքն եւ էութիւն աղէճորտերուն՝ որպէս զեւս ստամոքն. եւ ամէն աղէճորտերն զ եւ. եւ Գ վերինն է, բարակ է եւ նոսր, եւ Գ վերինն՝ թանձր եւ հաստ եւ լայն է. եւ այն Գ վերին աղէցն, որ բարակ են՝ նա առաջինն ասեն միայնիայ շարիայիայ, որ է երկանութիւն ժր մատ, ամէն մարդու իր մատոքն, թէ մեծ է եւ թէ փոքր է. եւ այլ պաղի աղէտտանն փատուտ են եւ ձուտ եւ ճուկ են. բայց այս աղիքն, որ ժր մատ են՝ ըզորդ է եւ ինքն ի ստամոքն կիպ է. եւ այն է՝ որ պաղապ ասեն. եւ թ աղէցն անունն սայիմ ասեն. Այս աղէցն այնոր համար սայիմ ասեն, որ ի ժր ինքն պարապ է եւ դատարկ ի կերակրէ եւ անվածոց. եւ այնոր համար դատարկ է այս աղիքս, որ կերակուրն շուտ անցնի յիրմէն եւ լի յեմել յինքն. եւ Գ-ին ամայ ալիտի դաղա ասեն, որ կերակուրն ի ինքն շատ արգելի. եւ այլ Գ աղիքն որ հաստ են՝ մէկին ասեն ավար. եւ ինքն աղիք մն է հաստ եւ Ա բերան ունի. եւ աղքն, որ ի լայն տեղացն որ լցվի աղիքն եւ այլվի լայն տեղացն ելնէ, եւ ինքն որպէս քէսայ է. եւ Գ-ին ավլի դուլին ասեն. եւ ինքն աղիք մն է հաստ եւ ամուր. եւ զկերպն զամենուն յիշած է. եւ Գ-ին ասեն ամայի մուտաղիմ, եւ ինքն աղիք մն է հաստ եւ ըզորդ քան զամէնն լան է եւ մեծ է. եւ մէկ ծարն ի նստոյտեղն ի կից է:

Знай, что особенности кишок такие же как и желудка. Всего шесть кишок. Три из них, которые лежат под желудком, уже и тоньше, а те, которые лежат еще ниже, толще и объемистее. Из верхних трех тонких кишок первая хорошо известна врачам, называется the aschila потому что длина ее равна двенадцати пальцам человека (li'gaadi двенадцать по-арабски). Эта кишка прямая и нет в ней изгибов и излов, как в других кишках. Это та кишка, которая прикреплепа к выходному отверстию желудка. Вторая кишка называется Amal saim, так как она всегда свободна от пищи, пища в ней только проходит, но не останавливается. Третья кишка называется Amal Dakhailh и она из нее пища останавливается на продолжительное время³¹. [И из трех толстых кишок первая называется avag, и она толста и имеет одно устье, и кал, который через него входит и наполняет кишку, оттуда же выходит. И она похожа на мешок]. Вторая толстая кишка называется Amal kl'olil. И она объемистее трех остальных. Нижняя третья кишка называется Amal musthalmi. Она прямая широкая и нижним концом закреплепа у заднего прохода.

Այս երկու բնագրերի համադրութիւնը, ինչպես եւ որանցում օգտագործված բժշկական տերմինները վկայում են նրանց հարադատութիւն մասին: Վերջիններս, ինչպես այդ ընդունված էր միջնադարյան բժշկարաններում, հիմնականում արաբական ծագում ունեն եւ կրելով որոշ փոփոխութիւններ, տեղ-տեղ նույնիսկ աղճատվել են: Դրանց թվին են պատկանում, օրինակ, բարակ եւ հաստ աղիքների անունները الاثنى عشری (լատ. duodenum), صائم (լատ. jejunum), دقيق (լատ. ileum), (լատ. coecum), قولون (լատ. colon), المستقيم (լատ. rectum): Հայերէն ձեռագրերի օգնութեամբ պարզել ենք վրացերէն բնագրում բացակայող հաստ աղիքներից առաջինի անունը՝ avag, որը համապատասխանում է արաբերէն افاق տերմինին, ինչպես նաեւ վերականգնել կույր աղիքի հետեւյալ նկարագրութիւնը. «եւ այլ

³¹ Վրացերէն բնագրի բացթողումը ֆակագծերում վերականգնած է ըստ Ամիրզովլաթի:

Կ աղիքն, որ հաստ են՝ մէկին ասեն ավար. և ինքն աղիք մն է հաստ, և Ա բերան ունի. և աղբն, որ ի յայն տեղացն որ լցվի աղիքն և այլվի յայն տեղացն ելնէ, և ինքն որպէս քէսայ է»:

«Օգուտ բժշկութեան» գրքի առաջին մասից վրացերեն բնագրում բաց է թողած «Վասն ճանապարհ գնալու» գլխի վերջին մասը և նրան հաջորդող «Վասն ի նաւ նստելու համար» ամբողջ գլուխը, ինչպես նաև «Վասն սնունդեան մանկանն» գլխի սկիզբը, իսկ գրքի երկրորդ մասից առանձին պատառիկներ, հատկապես մի մեծ կտոր խթ գլխից՝ «Որոյ երեսն ծոփ, որ տաճիկն լակուայ ասէ այս ցաւու», որտեղ վրացերեն բնագրում թերթ է ընկել: Սրանք հեղտությամբ կարող են վերականգնվել հայերեն ձեռագրերի օգնությամբ:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Օգուտ բժշկութեան» գրքի այն հատվածները համեմատությունը վրացերեն բնագրի հետ, որոնք սերտորեն առնչվում են հայկական բժշկության հնագույն շրջանի աղբյուրների, այդ թվում «Գագիկ-Հեթումյան բժշկարանի», Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» գրքի, ինչպես նաև նրա «Կերպ վասն կազմութեան աչաց» պատառիկի հետ: Եթե Ամասիացու բժշկարանի համար նման առնչությունները բնականոն երևույթ պիտի գիտվի ապա ինչով կարելի է բացատրել այդ իրողությունը վրացերեն բնագրի դեպքում, եթե ընդունենք նրա անկախ լինելը հայկական սկզբնաղբյուրներից: Բերենք մեկ օրինակ կատարած համեմատությունից:

Ամիրգովաթ Ամասիացի. «Օգուտ բժշկութեան» (ըստ Ստ. Մալխասյանցի հրատարակության, էջ 38—39)

«Ծիգնի սաակիմո» (ըստ Լ. Կոտետիշվիլու ռուսերեն թարգմանության, էջ 398—399)

Եւ այլ գիտացիր, որ այն Գ գիճութիւնն որ յիշեցի՝ յառաջի գիճութեան անունն պայլէ ասեն, որ է ինքն իսպիտակ և գէճ որպէս հաւկիթի իսպիտակուց: Եւ այլ Բ գիճութեան ասեն ճալիտէ, և ինքն յիստակ է որպէս պաղ: Եւ Գ գիճութեան ասեն զուճաճի, և է ինքն յիստակ, որպէս զապիկի հալած: Եւ այն ըռուտուպաթի ճալիտին աչացն ի մէջն է, որ է տեսութիւն աչացն, որպէս որ բոլորակին մէջն զնես կէտ մի, և ինքն յիստակ է և պայծառ և փայլուն, և զինչ որ տեսնու շուտով իմանայ. և իր կերակուրն ի ըռուտուպաթի զուճաճուն է, այնոր համար որ ինքն ճալիտուն յետեն է, և ըռուտուպաթի պայլին առչեն է. և ճալիտուն և ծիր ի կից լինին մէկ մէկի, և զգին շորութիւնն ի յիրմէն ի զատ պահէ:

Теперь опишу три застывшие жидкости глаза, о которых я выше упоминал, называемые Ruti o' a:hił Первая жидкость Balthai она именуется так, потому что представляет белую влагу наподобие яичного белка. Вторая жидкость называется Ruthol a:hił Djalidi, потому что похожа на лед. Третья жидкость называется Ruthobathil Zudjad'a, потому что подобна жидкому стеклу. Вторая жидкость Ruthobathil Djalidi находится внутри зрачка, она круглой формы и имеет посередине точку, сама она белого цвета и блестящая, чтобы она была заметнее. Питайся она третьей жидкостью, потому что третья жидкость помещается за нею, а первая жидкость находится впереди, чтобы увлажняла оболочки и противостояла сухости воздуха.

Բնագրագիտական ուսումնասիրության ընթացքում մենք անդրադարձել ենք նաև հայերեն և վրացերեն բնագրերի ոճային առանձնահատկություններին: Հայտնի է, որ Ամիրգովաթն իր գլխավոր գործերը՝ «Օգուտ բժշկութեան», «Անգիտաց անպէտ» գրքերը և «Ախրապատիւնը» գրել է ուսուցողական նպատակներով, ցանկանալով հայ բժիշկներին ծանոթացնել բժշկության բարդ հիմնահարցերի հետ: «Անգիտաց անպէտի» առաջաբանում նա հորդորում էր երիտասարդ բժիշկներին. «Եղիր հետևող իմաստու-

թեան հետ, եթէ շուանիս բժիշկ ես անդէտ»։ Այդ միտքը բազմիցս շեշտվում է «Օգուտ բժշկութեան» գրքում՝ թելադրելով հատուկ դիտարկելի ռճ, որ բնորոշ էր Ամիրդովլաթին. «Գիտացիր, որ շատոր կան, որ զանուն բժշկութեան յանձն են առել և զինքն բժիշկ է անուանել, թէ հարցանեն թէ զինչ է բժշկութիւն՝ և չի դիտէ զինչ գործէ ե ոչ կարէ պատասխանի տալ»³²։ Պահպանելով նույն դիտարկելի ռճը՝ վրացերեն բնադիրը հետևյալն է հայանում. «Знай, что большинство врачей, которые не знают силу действия лечения и предмет медицины, все же себя врачами называют. И если спросить их, в чем суть врачевания, они не знают»³³։ «Վասն կազմութեան ոսկերացն» գլխում Ամասիացին գրում է. «Գիտացիր, որ զոսկերացն մարդուն որպէս սուն է արարեր անձինն արարիչն Աստուած, և մարդուն հիմն առանց ոսկերի չի լինիր և չկարել կանգնիլ ի վերայ ոտիցն»³⁴։ Շատ հարազատ է հնչում վրացերենի շարադրանքը. «Знай, что кость в организме человека вместо столба, она фундамент организма, и человек стоит на ногах благодаря костям»³⁵։ «Վասն ճանաչելոյ գերական, որ է նամզն» գլխում ասված է. «Եւ այս ուսումն կատարեալ այսպէս ուսանին խիստ դժար է, և շատ ժամանակ աշխատիլ կու պիտի, որ հասնիս մեծ փառաց. բայց այսչափ որ յիշեցի՝ ուսանողի օգուտ լինի, և իմանայ և հասկանայ Աստուծով»³⁶։ Ժամանակի ընթացքում հայ բժշկապետի ռճը բյուրեղանալով փայլուն ձևով դրսևորվել է «Անգիտաց անպէտում»։ «Եւ ես, անպիտան ծառայ ծառայիցն Աստուծոյ,— գրում է նա,— ի յայս արուեստս շատ աշխատեցայ, մինչև զսա գտայ, և ստուգեցի կրկին կրկին, որ հեշտութեամբ յիմանան և ուսանողացն հեշտ լինի, և դիրութեամբ ուսանի»³⁷։

Վերոհիշյալ բնագրագիտական փաստերը Ամասիացուն բնորոշ ոճային առանձնահատկություններով հանդերձ, որոնք առկա են հայ բժշկապետի տարբեր գործերում, հնարավորություն են տալիս մեզ առանց վարանման կրկին վերահաստատել նրա հեղինակային իրավունքները «Օգուտ բժշկութեան» գրքի նկատմամբ, որը կասկածի տակ է առնվում ի. Արուստանի կողմից, մինչդեռ վրացերեն բնագիրը իր թարգմանական ձևի մեջ էլ պահպանելով հայերեն սկզբնաղբյուրի շարադրանքը և ռճը՝ չի կարող հավակնել լինել ինքնուրույն։

Այժմ անդրադառնանք մեկ այլ կարևոր հարցի, փորձելով քննել այն փաստարկները, որոնք առաջ են քաշում մեր վրացի կոլեգաները՝ ապացուցելով իրենց բնագրի ինքնուրույնությունը կամ, վատթարագույն դեպքում, ոչ թե հայերեն, այլ ինչ-որ արաբերեն կամ պարսկերեն բնագրի թարգմանություն լինելը։ Ի. Արուստանն գրում է. «Վրաց հուշարձանն սկզբում ունի մի հետաքրքրական հիշատակարան։ Այս «Գիրք բժշկութեան»,— ասված է այնտեղ,— թարգմանել տվեց վրացերեն ինձ՝ Նախկին Խոջայիս, ավագ դիվանագետի Ջղոնդիգելին, երբ Ռուքնագին Սուլթանին փախցրին Կարին քաղաքից և (դրքի ո սկզբնագիրն) այն ժամանակ ձեռք գցեցին այնտեղ որպես ավար»³⁸։ Արդյո՞ք վրացերեն բնագիրը թարգմանվել է սուլթան Ռուք-Պիինի (1196—1204) օրոք, երբ հայ-վրացական միացյալ զորքերը պարտության մատնեցին Իկոնիայի սուլթանին և ազատագրեցին Կարին քաղաքը։ Վերոհիշյալ հիշատակարանից բացի մնացած բոլոր փաստերը (բնագրագիտական համեմատությունները, սերտ կապերը ոչ միայն Ամիրդովլաթի, այլ նաև Մխիթար Հերացու գործերի հետ, ոճային առանձնահատկություն-

32 Ա մ ի Ր գ ո վ լ ա թ Ա մ ա ս ի ա ց ի. Օգուտ բժշկութեան, էջ 19։

33 Թիգնի սաակիմոնի—Կ. Էրիստավիի և այլոց «Медицина Грузии» գրքում, էջ 384։

34 Ա մ ի Ր գ ո վ լ ա թ Ա մ ա ս ի ա ց ի. Օգուտ բժշկութեան, էջ 28։

35 Թիգնի սաակիմոնի, էջ 391։

36 Օգուտ բժշկութեան, էջ 70։

37 Անգիտաց անպէտ, էջ 11։

38 Ի. Արուստանի. նշվ. աշխ., էջ 102։

ները) վկայում են այն մասին, որ թարգմանությունը կատարվել է հայկական բժշկարանից այն է՝ «Օգուտ բժշկութեան» գործից: Դրան չի հակասում նաև այն իրողությունը, որ վրացերեն բնագիրը, ըստ Ի. Արուստանի, հասել է XV դարի ձեռագրով, երբ ստեղծվել է Ամիրդովլաթի գիրքը: Ուստի ոչնչով հիմնավորված չէ այն եզրահանգումը, որ արել է Ի. Արուստանը, իբրև թե Կարին քաղաքից «ավար վերցրած» ձեռագիրը արաբական կամ սլավոնական սկզբնաղբյուր է եղել. տրամաբանորեն այն պիտի լիներ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» գրքի հայերեն գրչագրերից մեկը:

Այս կապակցությամբ մեր ուշադրությունը գրավեց Կարին քաղաքում 1754 թ. Բաղդասար Կարենեցու ձեռքով արտագրած մի հոյակապ հայկական ձեռագիր, որը պարունակում է Ամասիացու «Օգուտ բժշկութեան» և «Անգիտաց անպէտ» գործերը (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 7752)³⁹: Վերջինս Կարինից երկար ճանապարհորդություն է կատարել՝ 1813 թ. հասնելով էջմիածնի գրքատուն, որի կնիքն է կրում, իսկ հետագայում Մաշտոցի անվ. Մատենադարան (1949): Ձեռագրի հիշատակարաններից մեկում Բաղդասար դպիրը նշում է ձեռագրի ընդօրինակելու ժամանակը. «Ի թվին Հայոց ՌԻՃԳ» (1203+551=1754), իսկ մյուս հիշատակարաններում՝ ուղղակի արաբական թվերով՝ 1203 թ.⁴⁰: Արդյո՞ք վերջինս թյուրիմացության մեջ չի գցել «Նախկին հոռչալին» և պատճառ դարձել նրա ձեռքի տակ եղած բնագրի գրության ժամանակը տանել XIII դար, այսինքն 551 տարի առաջ, սուլթան Ռուք-ադ-Դինի ժամանակները: Այդ դեպքում դեռ պիտի շնորհակալ լինենք, որ № 7752 ձեռագրում զետեղված Ամիրդովլաթի երկրորդ նշանավոր գործը՝ «Անգիտաց անպէտ», որը ըստ Ստ. Մալխասյանցի, սկզբնապես առանձին գրքով է եղել և ավելի ուշ է կազմվել առաջինի հետ, կարող էր նույն ճակատագրին արժանանալ՝ հայտարարվելով ոչ թե հայ բժշկագետի, այլ անհայտ արաբ կամ պարսիկ հեղինակի գործ:

Ցավոք սրտի, վերջին տարիների դառը փորձը վկայում է, որ հայ մշակույթի նշանավոր հուշարձանների ապահովականացման ճիգերը շարունակվում են, այդ թվում հայ բժշկագետների գիտական ժառանգության նկատմամբ: Այս ամենը պահանջում է լուրջ ուշադրություն դարձնել բժշկարանների քննական բնագրերի հրատարակության և հայկական աղբյուրների բացահայտման ու բազմակողմանի ուսումնասիրման վրա:

АРМЯНСКИЕ ИСТОЧНИКИ АМИРДОВЛАТА АМАСИАЦИ

Доктор мед. наук С. А. ВАРДАНЯН

Резюме

Выдающийся армянский врач XV в. Амирдовлат Амасиаци в своих трудах, тщательно указывая на использованные им иностранные источники—труды древнегреческих, римских и византийских врачей, а также сирийских, арабских и персидских авторов, в то же время редко упоминает имена своих предшественников—

³⁹ Օ. Եգանյան և ուրիշներ. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվ. Մատենադարանի, հ. Ա, էջ 154, հ. Բ, էջ 604:

⁴⁰ Ստ. Մալխասյանցը «Օգուտ բժշկութեան» առաջարանում (էջ ԻԸ) մանրամասն նկարագրելով № 7752 ձեռագիրը՝ հրատարակել է առաջին հիշատակարանը, սակայն չի կարողացել վերծանել գրչի և նրա հոր անունները, ուստի բերենք այդ հատվածը մեր վերծանությամբ. «Որք կարդայք կամ օրինակէք, ողորմի առացէք զմեղաւոր և անարժան [Բաղդասար] իր իրիցու և ծնողացն իմոց [Տէր Մելքոն]նին և Մարգարտին»:

армянских врачей анлийской и киликийской школ. Критично относясь к их трудам, он в то же время продолжал следовать лучшим традициям средневековой армянской медицины, обогащая ее собственным опытом и достижениями мировой врачебной науки. Проведенное нами сравнение текстов книг Амасиаци «Польза медицины», «Непужное для неучей» и «Ахрапатин» с древнейшим армянским «Лецбником Гагика-Хетума», трудом Мхитара Гераца «Утешение при лихорадках» (1184 г.) и его же фрагментом по анатомии глаза показало, что Амирдовлат пользовался вышеуказанными источниками. Выявление и изучение армянских источников трудов Амирдовлата важно для понимания его места в средневековой армянской традиции и в то же время позволяет отразить попытки отчуждения его книг от культурного наследия армянского народа. В статье проведено текстологическое сравнение книги «Польза медицины» и ее грузинской версии «Цигни саакимой», которую И. Абуладзе склонен считать не переводом труда армянского бжшканета, а некоего анонимного арабского или персидского источника. Анализ текста книги «Польза медицины», выявление ее армянских источников, относящихся к X—XII вв., наряду с особенностями языка и стили говорят о несомненном авторстве Амасиаци. В то же время сравнение текста «Цигни саакимой» с двумя вариантами списков книги «Польза медицины» (первоначальной и в редакции врача XVII в. Буниата Себасти) свидетельствует о генетическом родстве грузинской версии с армянским первоначальным вариантом (рук. Матенадарана ям. Маштоца №№ 5847, 6275, 7731, 7752, 8052, 9467, 9837, 9844). В статье сделана попытка восстановления пропусков в тексте «Цигни саакимой» с помощью армянских рукописей книги Амирдовлата «Польза медицины».

ARMENIAN SOURCES OF THE WORKS OF AMIRDOVLAT AMASIATSI

Prof. S. A. VARDANIAN

S u m m a r y

In his works the outstanding Armenian physician of the XV c. Amirdovlat Amasiatsi was always careful to cite the foreign sources he used (Greek, Arabian, Syrian, Persian). At the same time he referred very rarely to the works of his predecessors—Armenian physicians of Ani and Cilicia. The textological analysis of Amirdovlat's works „The Usefulness of Medicine“, „A Useless Book of the Ignorant“ and „Achrapatin“ their comparison with the „Medical Book of Gagik-Hetum“, „Consolation for Fevers“ by Mechitar Heratsi and his fragment „On the Structure and Origin of the Eye“ show that the Armenian master of the XV c. often used the medical manuscripts of earlier epoch. The exposure of these Armenian sources of the works of Amirdovlat is very important: first — for understanding Amasiatsi's place in the medieval Armenian medical tradition, and second — to repel all the attempts to estrange his works from the cultural heritage of the Armenian people. The text of Amirdovlat's „The Usefulness of Medicine“ was compared with the Georgian version „Tsigni saakimoi“ which to J. Abuladze is a translation of an ancient Arabian or Persian source. The analysis of the text of „The Usefulness of Medicine“, the exposure of its earliest Armenian sources together with peculiarities of the style of Amirdovlat witness undoubtedly his authorship. The comparison of the text of „Tsigni saakimoi“ with the two Armenian versions of „The Usefulness of Medicine“ (the first and another edited by Buniat Sebastatsi) has shown that the Georgian version is intimately related to the first Armenian version of Amirdovlat's book. In the article an attempt is made to restore the omissions of the text of „Tsigni saakimoi“ by the help of Armenian manuscripts of Amirdovlat's „The Usefulness of Medicine“.